ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«19» 02 2012 թ.. N 0 3-2/0251-13

Ձեր «___» _____ 2012թ. N 0_

0051, ք. Երևան, Կոմիտաս 49/3
Հեռ. (+37410) 20-14-61

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ իրավաբան Գ. Հայրապետյանին
(ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ)
Հեռ. 56 03 60

Ի պատասխան Ձեր 12.02.2013թ. թիվ 560 դիմումի՝ տեղեկացնում եմ, որ համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի. «1. Պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար: Պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները և գրանցված իրավաբանական անձանց կանոնադրությունները հասանելի են տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից՝ օրենքով նախատեսված դեպքում պետական տուրքը վճարելու պայմանով:

2. Պետական միասնական գրանցամատյանի մասնակի տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, պետական գրանցման տարին, ամիսը, օրը, իրավաբանական անձի գրանցման համարը, իրավաբանական անձի հիմնադիրները, իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելը) տրամադրվում են առանց պետական տուրք վճարելու»:

Հաշվի առնելով օրենքի վերը նշված պահանջը՝ տեղեկացնում եմ, որ իրավաբանական անձանց կոնտակտային տվյալները կարող են տրամադրվել միայն օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու դեպքում:

Հարգանով՝ **Ա. Գևորգյան**

19.02.2013թ.

Կատարող՝ Լ. Պողոսյան
Հեռ. 20-14-32